Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

327/151
№ 213.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Գործող Բանվորների Համամիութենական Ակադեմիական Միության Կենտրոնական Կոմիտե

ԿԱՆՈՆՆԵՐ

ՃԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՆՎՏԱՆԳ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Կ. Բ. Հ. ԱՐՇՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ
1927 — ՅԵՐԵՎԱՆ

995-ԱԳԳ

Հաստատված կառուցողների կենտկոմի նախագահության 1925 թվի մայիսի 14-ի նիստում
(Արձանագրություն № 15)

Շրջաբերական № 24 1926 թ. մայիսի 14-ին

ԿԱՌ. ԲԱՆՎ. ՀԱՄ. ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԽՍՀՄ-ի Աշխժողկոմատի 1926 թ. մայիսի 4-ի №103/340 պարտադիր վորոշման՝ „Շինարարական աշխատանքները անվտանգ դարձնելու կանոնները“ կյանքում կիրառելու մասին.

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Ի կատարումն Կառուցողների Համամիութենական VI համագումարի վորոշման՝ կենտկոմը մշակել է «Կանոններ շինարարական աշխատանքներն անվտանգ դարձնելու միջոցների մասին», վորը հրատարակվել է վորպես «ԽՍՀՄ-ի Աշխժողկոմատի պարտադիր վորոշում»։

Հսկայական նշանակություն տալով դժբաղդ պատահարների դեմ կռվելու գործին, որը շինարարական աշխատանքների մեջ աշխատանքի պաշտպանության հիմնական խնդիրն է հանդիսանում, Կենտրոնական Կոմիտեն առաջարկում է հատուկ ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ ներկա կանոնները, որ հրատարակվել են կառուցումների ժամանակ դժբաղդ պատահարները կանխելու նպատակով, իրագործվեն անվերապահ կերպով։

Այդ նպատակով Կենտրոնական Կոմիտեն առաջարկում է կիրառել հետևյալ կոնկրետ միջոցները.

1. Սույն «կանոնների» բովանդակությանը լայնորեն տեղյակ դարձնել բանվորներին՝ կախելով այն հանրակացարաններում, ճաշարաններում, ակումբներում և այլն, և բացատրել նրանց հիմնական խնդիրները՝ զեկուցումների, ընդհանուր ժողովների, դասախոսությունների ու զրույցների միջոցով, որպիսի աշխատանքների մեջ պիտի քաշել տեխնիկական պերսոնալին ու աշխ. տեսչությանը։

2. Հրավիրել աշխատանքի պաշտպանության հանձնաժողովների խորհրդակցություններ, սույն «կանոնները» հիմնավորապես ուսումնասիրելու,

որպիսի աշխատանքի մեջ քաշել նաև ՃՏՍ-ին։

3. Վճռականապես պահանջել շինարարական աշխատանքները վարող մարմիններից ու անձերից, անպայմանորեն իրականացնել սույն «կանոնները» և անմիջապես վերացնել նկատված խախտումները։ Եթե նկատված խախտումները վերացնելու մասին միութենական մարմինների (բանկոմի, աշխ. պաշտպ. հանձնաժողովի և այլնի) պահանջները չեն իրագործվում, հարկավոր է անմիջապես հայտնել աշխատանքի տեսչությանը, համապատասխան միջոցներ ձեռք առնելու և մեղավոր անձանց պատասխանատվության յենթարկելու համար։

4. Պարտավորեցնել աշխ. պաշտպանության հանձնաժողովին, որ նա պարբերաբար, աշխատանքի ժամանակ հետազոտի լաստանները (խարաչոները) վերելակները, սանդուխքները, բարձրացնող մեքենաները և այլն։

5. Մանրաղնին կերպով ուսումնասիրել առանց բացառության բոլոր դժբաղդ պատահարները, պարզել նրանց պատճառները և դատական պատասխանատվության յենթարկել ավյալ ձեռնարկության վարչությանը, եթե պարզվի, որ նա խախտել է անվտանգության տեխնիկայի կանոնները։

6. Բոլոր այն նյութերը, որ վերաբերում են սույն «կանոններ»-ի կիրառմանը, կամ որոշ անհրաժեշտ լրացումներ անելուն, ինչպես և բոլոր դժբաղդ պատահարների մասին՝ տեղեկություններ պիտի ուղարկվեն Կենտկոմ։

Ընկերական բարևներով՝

Իտ. Կառ. Բան. Համ. Արհմ. Կենտկոմի քարտուղարի՝

Կենտկոմի տարիֆ-տնտ. բաժնի վարիչ՝ ՍԱՎԻՆ

Իտ. Կենտկոմի գործերի վարիչի՝ ՄԱԶՈՒՐԻՆԱ

ԽՍՀՄ-ի ԱՇԽԱՏՈՂԿՈՄԱՏԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1926 թ. մայիսի 4-ին № 103/340

ԿԱՆՈՆՆԵՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՆՎՏԱՆԳ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դաշնակից հանրապետությունների Աշխատողկոմատներին

I. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ, ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՅԵՎ ԴԱՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Շինարարական նյութերը դասավորելու համար նախատեսված տեղը պետք է հարթել, իսկ ձմեռ ժամանակ՝ պետք է մաքրել ձյունից և սառույցից։ Այս պահանջը պիտի կատարել հատուկ խնամքով, մանավանդ՝ յերբ դասավորվելու յեն այնպիսի շինություններ, որոնք կարող են քանդվել կամ գլորվել, ինչպես օրինակ՝ աղյուսի շարքերը, քարի կամ գերանների կույտերը և այլն։

2. Աղյուսը, քարը և այլ նման ծանր նյութերը պիտի փոսից, փորվածքից այնքան հեռու դասավորել, որ այդ շինությունների ծանրության

տակ փոսի պատը չփլի, չսահի։ Այդ տարածությունը պակաս չպետք է լինի փոսի բնական հողաշերտի անկյունագծի տարածությունից։

Նեղված տեղերում, այն ել փորված քի պատերը թեք լինելու դեպքում, այդ տարածությունը կարելի է փոքրացնել մինչև մեկ մետր, բայց այն պայմանով, որ փոսի պատերը համապատասխան ձևերով ամրացված լինեն։

Ե. Անտաշ քարերը, տաշված հիմնաքարերը, յերկար շքասյունները (колонна) պետք է դասավորվեն պառկած դրությամբ, ատիճանաքարերը, զարդաքարերը (карниз) պիտի դասավորել տափակուցին, իսկ աղյուսը՝ քառակուսիներով, ըստ վորում, հիշյալ նյութերին անարգել մոտենալու համար արանքներում համապատասխան ազատ տարածություն պիտի թողնել։

Քարի կամ սալի կույտերի բարձրությունը մեկ մետրից ավելի չպիտի լինի, իսկ աղյուսը պիտի դարսվի 25 շարքից վոչ ավելի։

4. Շիններով լցված տակառները (մանավանդ ցեմենտով լի տակառները) պետք է դարսվեն պառկած դրությամբ և վոչ ավելի յերեք շարքից, իսկ կանգնած դրությամբ՝ վոչ ավելի յերկու շարքից, ըստ վորում, պետք է միջոցներ ձեռք առնվեն, վոր տակառները չգլորվեն, վորի

համար կարելի է շինել ցանկապատեր, սյուներ, հենարաններ և այլն։

Ծանոթություն.—յեթե ցեմենտով լի տակառները դասավորվում են պահեստներում՝ մի պատից մինչև մյուս պատը, այդ դեպքում թույլատրվում է պառկած դրությամբ դասավորել մինչև չորս շարք։

5. Տախտակները դասավորելու ժամանակ հիմքը պիտի ամուր դնել, կամ ուրիշ այնպիսի միջոցներ ձեռք առնել, վոր ապահովվի դարսերի լիակատար կայունությունը։ Տախտակի շարքերի բարձրությունը 1,5 մետրից ավելի չպիտի լինի։

6. Գերաններ դարսելիս պետք է միջոցներ ձեռք առնվեն, վոր գերանները չգլորվեն։ Յեթե տեղի փոքրության պատճառով գերանները դասավորվում են մեկ ուղղությամբ, այդ դեպքում՝ կույտի ամրության համար կամ շարքերի մեջ փայտե ցցեր են տնկվում և կամ յերկու կողմերից տնկվում են հատուկ հենարաններ, վորոնք իրար հետ կապվում են յերկաթալարից հյուսված պարաններով։

7. Պարկերի մեջ շիններները յերեք շարքից ավելի չպիտի դասավորվեն։

8. Աղյուսի, քարի, գերանների և այլ շիններ կույտերը չպետք է հենել ժամանակա-

վոր ցանկապատերին և այլ անհատուստ հենարանների։

9. Առաջուց գործածության մեջ յեղած անտառանյութերը պիտի դասավորվեն վորպես նոր նյութեր, բայց նոր տեղը փոխադրելուց առաջ նրանց վրայից պիտի հանվեն, կամ համապատասխան ձևով ծռվեն, մաքրվեն մեխերը, յերկաթակապերը (скоба) և այլն։

10. Յերբ ավյալ աշխատանքի մեջ կիր և գործադրվում, պիտի միջոցներ ձեռք առնել, վոր այդ կիրը քամին չցրի, վորի համար պետք և պահել փակ շենքերում։ Ծայրահեղ դեպքում, յերբ կիրը պահվում և բացոդյա, անհրաժեշտ և ծածկել այն ավազի բավական հաստ շերտով։

Կրի շիջեցումը (հանգցնելը) կարելի յե հանձնարարել միմիայն փորձված բանվորներին։ Կիրը շիջեցնողին (հանգցնողին) ապահովող ակնոցներ և մասնագիտական հագուստներ տրվում են ԽՍՀՄ-ի աշխժողկոմատի կողմից սահմանված չափերով։

Կրահորերը պիտի ցանկապատված կամ ծածկված լինեն, վորպեսզի պատահմամբ նրանց մեջը ընկնող չլինի։

11. Գերաններ փոխադրող բանվորները պիտի ուսին և մեջքին դնելու համար ուսկալներ

ստանան՝ լցված վորևե փափուկ նյութով (նուրբ տաշեղ, թեփ և այլն)։ Քար փոխադրող բանվորներին պետք և տալ թևնոցներ՝ ըստ ԽՍՀՄ-ի Աշխժողկոմատի հաստատած նորմաների։*)

12. Յերբ շինյութերը մի տեղից մի այլ տեղ են փոխադրում կանայք կամ անչափահասները, այդ դեպքում պիտի պահպանվեն այն չափերը, վոր սահմանված և Աշխժողկոմատի 1921 թ. մարտի 4-ի պարտադիր վորոշումով՝ «Անչափահասների ու կանանց կողմից ծանրություններ փոխադրելու չափերի մասին». (պարտ. վորոշ. և կանոնների ժողովածու արդյունաբեր. անվտանգ. տեխնիկայի մեջ. III մ.)։

II. ՀՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

13. Հորեր, փոսեր, հիմքեր, գուբեր և այլն նման խորություններ պիտի փորվեն կամ փորված քի հիմնական հողաշերտի անկյունագծին համապատասխանող շեղ պատերով և կամ, անհնա-

*) Շինարարական աշխատանքներում կամ կայծաքարային (силикатной) արդյունաբերության մեջ զբաղված բանվոր-ծառայողների մասնագիտական հագուստի և նախազգուշական իրերի չափերը» Հաստատված ԽՍՀՄ-ի Աշխժողկոմատի կողմից 1923 թ. ոգոստ. 1-ին «Մասնագիտական հագուստ. և նախազգ. իրերի չափերը»։

րինության դեպքում, փորվածքի պատերը պիտի լինեն ուղղահայաց, սակայն այդ դեպքում եվ նրանք ամրացված պիտի լինեն համապատասխան ձևերով։

Ծանոթություն.—փորվածքի պատերին թեքություն տալու ժամանակ առնվազն հետևյալ չափերը պիտի պահպանվեն—սահողին՝ 1,00, ածուի հողին՝ 1,20 և ավազահողին՝ 1,50։ Փլող և սահող թմբերի մոտ հողի հատկությանը համապատասխանող ամրություններ պիտի կառուցվեն։

14. Արգելվում է հողի տակից փորելով ճիմեր (ճումբեր) հանելը։

15. 1,5 մետրից (2 արշին) ավելի խորություն ունեցող փոսերից հողը դուրս տալիս պետք է միջոցներ ձեռք առնվեն, վորպեսզի հողը կամ քարերը կրկին փոսի մեջ չթափվեն (փոսի բերանից հետ տալ, ավելի հեռու շպրտել և այլն)։

16. Հարևան հիմքի կողքով նոր հիմք փորելը պիտի կատարվի մաս առ մաս (կտորներով), վորոնցից ամեն մեկի յերկարությունն ավելի չպիտի լինի 1,5 մետրից։ Հարևան հիմքերից ավելի խորը հիմք փորելիս պիտի փորվածքի պատերը ամրացնել, վորպեսզի հողը չսահի, չփլի։ Ավազահողի դեպքում պահանջվում է փորվածքի պատերը ավելի ամուր շինել, վորի համար պետք

է տախտակները վոչ թե իրար մոտ շարած լինեն, այլ պիտի իրար մեջ հագցվեն։ Բացի այդ, նման փորվածքների ժամանակ պետք է առաջ փորել յերկարաձիգ հիմքերը և միայն դրանք լցնելուց հետո սկսել հատող հիմքերի փորվածքը, նույնպես մաս-առ-մաս, անմիջապես լցնելով ամեն մի փորվածքը՝ մինչև հարևան հիմքին հավասարվելը։

17։ Տախտակուղիները (катальные доски) և ռելսագծերը, վորոնց վրայով սայլակներով շինություններ են փոխադրվում, փոսերի, հորերի մոտով անցնելիս թեքված չպիտի լինեն դեպի այդ փորվածքները։

18. Փորվածքների վրայով անց ու դարձի տեղերը շինվում են հետևյալ ձևով. յեթե անցը նյութեր փոխադրելու համար է, շինվում է 4 տախտակից, 50—63 մմ. (2″—2½″) հաստությամբ, բացի այդ, յերկու կողմերից շինվում է բազրիք (մուհաջառ), առնվազն 1 մետր բարձրությամբ։ Յեթե անցը նյութեր փոխադրելու համար չէ և յերկարությունը 2 մետրից չի անցնում, թույլատրվում է շինել յերկու տախտակից, իսկ յերկու մետրից ավելի յերկարություն ունեցող անցերը շինվում են հիշված հաստությամբ յերեք տախտակից։ Այդ տախտակները ցածի կող-

մից պիտի իրար միացված լինեն փայտի ձողերով, իսկ յեթե անցնելիս տատանվում են, տակից ել ամրացված պիտի լինեն հենարաններով (դյուչառ)։

19. Հասարակական ոգտագործման մեջ յեղած վայրերում (փողոց, հրապարակ և այլն) փոսեր, հորեր և այլն փորելիս՝ աշխատանքի վայրի շուրջը պետք և վստահելի ամրությամբ պատնեշներ շինվեն։

III. ՈԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԼԱՍՏԱՆՆԵՐ (ԽԱՐԱՁՈՆԵՐ)

20. Լաստանները (խարաչոնները,) ցցագերանները, տախտակամածները պետք և կառուցված լինեն միանգամայն ամուր նյութերից։

21 Լաստանների շինվածքը, ինչպես և այդ նպատակով գործադրվող նյութերի չափերը պետք և համապատասխանեն «урочное положнние»-ի ամրության ու կայունության պայմաններին (§ 130, 131, 132)։

Մատնանշված չափերից պակաս փայտեղեն ոգտագործելու դեպքում անհրաժեշտ և ստուգել նրանց համապատասխան ամրությունը։

22. Վորպեսզի այդ լաստանները (խարաչոնները) շենքից պոկվելով հետ չընկնեն,

հարկավոր և ցցագերանները կանգնեցնել դեպի պատը թեքված և միլերով պիտի ամրացվեն պատին։ Այդ միլերի մի ծայրը պիտի ամրացվի ցցագերաններին, իսկ մյուսը պիտի խրված լինի պատի մեջ՝ առնվազն 25 սմ. (1 աղյուս) խորությամբ, կամ թե պատի միջով պիտի անցնի և հենվի հարևան պատին։ Բացի այդ, վորպեսզի ցցագերաններն ավելի ամուր լինեն, նրանց բարձրության յուրաքանչյուր վից մետրից հետո պիտի ամրացվեն պատին յերկաթալարի պարաններով, անշպագանների միջոցով։ Այս ձևով ամրացվում և ուղղակի պատին, կամ մյուս կողմի պատին և կամ վորևե այլ ամուր բանի։

Ցցագերանները պիտի խրված լինեն գետնի մեջ առնվազն 1 մետր խորությամբ և կամ յերկաթակապերով ամրացված լինեն հիմնագերանին։ Ընդհանրապես ցցագերանները տնկելիս և նրանց հիմքերն ամրացնելիս միջոցներ պիտի ձեռք առնվեն, վոր նրանք վոչ ընկնեն և վոչ ել ծռվեն։

Յերբ ցցագերանները շինվում են մի քանի գերաններից միատեղ, այդ դեպքում այդ գերանները տնկելիս պիտի ամրացված լինեն իրար յերկաթակապերով և յերկաթե գոտիներով, առնվազն 1 մմ.×25 մմ. չափի։

Ծանոթություն.—մի քանի գե-

բաններից կազմված ցցաղերանները անկելիս՝ պիտի իրենց տաշվածքով կապված լինեն իրար, ըստ վորում՝ կապերի միջև յեղած տարածությունը պակաս չպիտի լինի 1,5 մետրից։

23. Հենված դրությամբ ցցաղերանները տատանումից ապահովելու համար պիտի շեղ, անկյունագծային նեցուկներով ամրացված լինեն այնտեղ, ուր կարիք և դգացվում։

Չի թույլատրվում ցցաղերաններն ու տախտակամածները ամրացնել շենքի թույլ մասերին՝ բազրիքին (մուհաջառ), ջրատար խողովակներին և այլն։

24. Լաստանների տախտակամածը պիտի լինի առնվազն 5 սմ (2 դյուիմ) հաստության տախտակից, վորոնք պիտի փռված լինեն շատ խիտ և ծայրերը միլերի վրա։ Փռվածքի հետևյալ շարքի ծայրերը պիտի ծածկեն նախորդ շարքի տախտակների ծայրերը և այն էլ անպատճառ միլերի վրա։ Այնտեղ, ուր շարունակ անցուդարձ պիտի լինի և բեռներ պիտի փոխադրվեն, պետք յեղած տեղերում տախտակները պիտի ամրացված լինեն մեխերով։

Տակառների կամ կոճղերի վրա միջնական տախտակամածներ շինելը թույլատրվում է վոչ ավելի մեկ յարուս բարձրությամբ, ըստ վորում՝

չի թույլատրվում տախտակների ծայրերն ազատ կախված թողնել, կամ ապրուս դարսել նրանց տակը։

25. Բոլոր տախտակամածները ոգտագործելու ժամանակ պիտի դիմացկուն բազրիքներ ունենան, առնվազն 1 մետր բարձրությամբ, վորոնց ստորին մասը պիտի ունենա կողափակ տախտակ՝ առնվազն 18 սմ. բարձրությամբ։

Յերբ ոժանդակ կառուցվածքը շինվում է այնպիսի տեղ, ուր շարժումը, յերթևեկությունը շատ է, տախտակամածները պիտի լինեն շատ խիտ։

26. Իշոտնուկների վրա տախտակամած շինել թույլատրվում է—ծանր աշխատանքների համար վոչ ավելի $3^1/_2$ մետր բարձրությամբ (որինակ՝ յերբ ապրուսի կամ քարի պատ է շարվում), իսկ թեթև աշխատանքների դեպքում ամենաշատը 5 մետր բարձրությամբ (որինակ՝ ցեխածեփ պատերի, կամ սվաղ անելու համար)։ Իշոտնուկի վոտքերը պիտի լավ ամրացված լինեն և իրենք իշոտնուկներն էլ իրենց կայունությամբ պիտի համապատասխանեն ավյալ ծանրությանը։ Իշոտնուկը դնել թույլատրվում է միմիայն կամ ուղղակի գետնի վրա և կամ խիտ և ամուր տախտակամածի վրա։

27. Պատից հորիզոնական ուղղությամբ

դուրս ցցված գերանների վրա կախված տախտակամած շինելը թույլատրվում է գերանների դիմացկունությունը լավ ստուգելուց հետո, որպեսզի նրանք կարողանան պիտանալ տախտակամածի վրա աշխատող բանվորների և այնտեղ դասավորող շինյութերի ծանրությանը։

28. Անցքերի և ընդհանրապես շենքի տակով անց ու դարձ անելու ճանապարհների վրա պիտի թեթև տախտակից ձեղուններ-ծածկոցներ (козырки) շինել, որպեսզի շինյութերը վերևից ցած չթափվեն։ Ձեղունները (козырки) չպիտի ոգտագործել նրանց վրայով անց ու դարձ անելու, կամ վրան շինյութեր դասելու համար։ Ձեղունի լայնությունը պակաս չպիտի լինի մեկ մետրից, ըստ որում՝ պիտի թեքված լինի դեպի պատը և պիտի ունենա բարձր մի տախտակից՝ ոչ պակաս 18 սմ. բարձրությամբ։

29. Առաջուց շինված ոժանդակ կառուցվածքն ոգտագործելիս յուրաքանչյուն ոգտագործող պարտավոր է ստուգել ու հավատիանալ, որ այդ ամբողջ շինվածքը կանոնավոր վիճակում է, կարելի յե ոգտագործել և ունի բոլոր նախազգուշական պարագաները։

30. Անց ու դարձի տախտակամածը ամեն որ պիտի մաքրել շինարարական ագրից, խճից,

իսկ ձմեռը՝ սառույցից, ձյունից և պիտի շաղ տալ ավազ կամ մոխիր։

31. Տեխնիկական կազմն ու շենքի վրա աշխատողները ուշադիր կերպով պիտի հետևեն, որ տախտակամածների, ճաղափայտերի, բազրիքների վրա մեխեր, պիթակներ, փշեր, քերվածքներ չլինեն, ինչպես և—մեխերով, փշերով տախտակներ, փայտեր, գերաններ, թափված չլինեն։ Նկատված մեխերն ու քերվածքներն անմիջապես պիտի հանվեն, հեռացվեն և կամ ծալելով, հարթելով անվտանգ դարձվեն։

IV. ՍԱՆԴՈՒԽՆԵՐ, ՅԵԼԱՐԱՆՆԵՐ, ՃՈՃԵՐ

32. Յելարանները (стремянка) շինվում են՝ վրան շատ պինդ կերպով ամրացնելով աստիճանափայտերը (набойки)։

33. Յելարանները համապատասխան ամրություն պիտի ունենան, որպեսզի նրանց վրայով անց ու դարձ անելիս կամ բեռ փոխադրելիս՝ չբատանվեն-չճռճվեն, բացի այդ՝ պիտի աշխատանքի բնույթին համապատասխան լայնություն ունենան։

34. Յելարանները յերկու կողմերից պիտի բազրիքներ ունենան։ Բեռներ փոխադրելիս, սայթակումների առաջն առնելու համար, յելարաննե-

ի բազրիքների ցածի մասում յերկարությամբ կողատախտակ պիտի խփվի, առնվազն 18 սմ. բարձրությամբ։

35. Յելարանների տախտակամածի տակի շեղափայտերը, վորոնց վրա տախտակներն են ամրացված, յերկու կողմից ծայրերը պիտի դուրս յեկած լինեն առնվազն 50 սմ. (12 վերշոկ) յերկարությամբ, գոնե մեկընդմեջ, վորպեսզի նրանց վրա ամրացվեն բազրիքների հենարանները (նեցուկները)։

36. Յելարանների տակից խփված հենափայտերը և յերկու կողմի զուգահեռ ձողերը վերին մասում պիտի իրար հետ ամրացված լինեն յերկաթակապերով, իսկ դրանց գեռնին հենած ծայրերը ապահովված պիտի լինեն սահելուց և խբբվելուց։ Դրա համար պիտի տակը տախտակ կամ կոճղ դնել, վորին պիտի ամրացնել հենարանի ծայրը։

37. Տախտակամածը պիտի խիտ լինի, այնպես, վոր արանքներ, ծակեր չունենա, իսկ տախտակների ծայրերը ոդում կախված չպիտի լինեն։

28. Յելարանների տախտակամածը ամեն որ պիտի մաքրվի շինարարական աղբից, ձյունից և սառույցից։ Բացի այդ, խոնավ կամ սառնամա-

նիք յեղանակներին, որական մի քանի անգամ այդտեղ պիտի ավազ կամ մոխիր ցանվի։

39. Յելարանները, նույնիսկ ժամանակավորապես, չպիտի ծանրաբեռնվեն վորևե տեսակի շինարարական նյութով։ Ծանրաբեռնող ամեն մի առարկա անմիջապես պիտի հեռացվի յելարաններից։

40. Գերաններ, միլեր, (սորոպիլներ) և այլ նման ծանրություններ բարձրացնելուց առաջ պիտի հիմնավորապես ստուգել յելարանները, տախտակամածներն ու բազրիքները՝ վորոշելու համար նրանց ամրությունն ու դիմացկունությունը։

41. Շենքի վրա աշխատողները յելարանների, տախտակամածների կամ վորևե այլ թերությունը նկատելուն պես անմիջապես պիտի հայտնեն տեխնիկական հսկողությանը, վորպեսզի համապատասխան միջոցներ ձեռք առնվի՝ վերացնելու նկատված թերությունը։

42. Շարժական յելարանները պիտի շինել ամուր և իր յերկարությանը համապատասխանող հաստ փայտեղենից։

Չի թույլատրվում շարժական յելարանների աստիճանափայտերն ամրացնել մեխերով։

Յելարաններն իրար կցել թույլատրվում և

միայն այն պայմանով, որ նրանք շատ պինդ կերպով ամրացված լինեն իրար մետաղե կապերով (յերկաթի ողեր, յերկաթի ձողեր և այլն), բայց ոչ յերբեք մեխերով։ Իրար կցվող յերկու յելարանները ել պիտի ունենան նույն հաստությունը, որպեսզի կցվելուց հետո բանվորները վեր ու վար անելիս չծռվեն և չճռճեն։

Յեթե կարիք լինի յելարանը շենքի մոտ ցից դնել փողոցի կողմից, այդ դեպքում նրա հիմքի մոտ պիտի կանգնեցնել մի չափահաս բանվոր՝ որպես հսկիչ։

Զուխտակ յելարանները պիտի ամուր կապված լինեն իրար, որպեսզի աշխատանքի ժամանակ ինքնին չբացվեն-չհեռանան իրարից։

43. Կցված-ջուխտակ յելարաններն այնպիսի բարձրություն պիտի ունենան, որ հնարավոր լինի վերին ծայրից առնվազն մեկ մետր ցած կանգնած աշխատել։

Արգելվում է աշխատանքներ կատարել վերևի աստիճանի վրա կանգնած, առանց համապատասխան հենարանի։ Յեթե յելարանի վերին մասում փոքրիկ տախտակած տարածություն կա, ապա այդ տախտակամածը յերեք կողմից փակված պիտի լինի բազրիքով (մուհաջառ)։

44. Աշխատանքի ընթացքում ճոճեր ոգտագործելու դեպքում նրանց պարանները պիտի լինեն լավ վորակի և հաստության շրջագիծը ոչ պակաս 80 միլիմետրից։ Ճոճերը պիտի կախված լինեն ճախարակների միջոցով, վորոնք վատահելի կերպով ամրացված պիտի լինեն շենքի վորևե դիմացկուն մասին (ծխնելուղին, ձեղունակալին և այլն)։

Ճոճերի, պարանների և ճախարակների ամրությունն ու դիմացկությունը պիտի համապատասխանի այն ամենաշատ ծանրության, որին կարելի յե յենթարկել այդ հարմարություններն աշխատանքի ընթացքում։

Տեխնիկական վերահսկողությունն ամենախիստ կերպով պիտի հետևի, որ աշխատանքի ընթացքում ճոճերը ոչ մի դեպքում չափից ավելի չծանրաբեռնվեն։

Ճոճերն այնպես պիտի շինված ու հարմարեցված լինեն, որ նրանց վրա աշխատող մարդը կամ շինությունները վայր չթափվեն։

Յեթե ճոճն ամրացված է կեռերի վրա, ապա այդ կեռերն այնպես պիտի շինված լինեն, որ ճոճի պարանը դուրս չընկնի նրանց միջից։

Ճոճն իջեցնելու և բարձրացնելու ժամանակ պարանները պիտի քաշի բեռնորդը (лебедка)

կամ ցածում գտնվող բանվորը, բայց վոչ յերբեք ճոճի միջի բանվորը, ըստ վորում՝ պարանի ազատ ծայրը պինդ կերպով պիտի ամրացնել։

V. ԳԵՐԱՆԱԾԱԾԿԸ

45. Յերբ արդեն գցված գերանների վրա տախտակ ե փռվում, վորը տախտակամածի տեղ պիտի ծառայի, այդ տախտակների հաստությունը պակաս չպիտի լինի 4,5 սմ. (1 վերշոկ) և դասավորված պիտի լինեն շատ խիտ, առանց վորևե արանքի կամ անցքի։

46. Այդ տախտակամածի տախտակների ծայրերը պիտի դրված լինեն գերանների վրա, վորպեսզի ծանրության տակ չշարժվեն ու չխաղան, իսկ հետևյալ շարքի տախտակների ծայրերն ել պիտի դրված լինեն նախորդ շարքի տախտակների ծայրերի վրա։

47. Առանց տեխնիկական վերահսկողության թույլտվության արգելվում ե տախտակամածի միևնույն տեղում մեծ քանակությամբ շիններ դարսել։

Արգելվում ե ծանրաբեռնել կրկնահատակը (черный пол) (գերանների արանքում ցածից խփած տախտակածածկը)։

48. Առաստաղի գերանների վրայով անցու-

դարձ անելու և ծանրություններ փոխադրելու համար տախտակամած շինելու անհրաժեշտության դեպքում այդ տախտակամածը պիտի բազրիք ունենա, առնվազն մեկ մետր բարձրությամբ, վորի ցածի մասում պիտի խփված լինի կողատախտակ՝ առնվազն 18 սմ. լայնությամբ։ Նույն նպատակի համար կրկնահատակի ոգտագործումը վոչ մի դեպքում չի թույլատրվում։

49. Ժամանակավոր խիտ տախտակամածը մասամբ կամ ամբողջապես քանդելու դեպքում միանգամայն պիտի արգելվի այդ շինքը մտնելը՝ համապատասխան ցանկապատերով, յեթե համաձայն նախորդ հոդվածների ապահովված անցքեր չեն շինված։

VI. ԱՆՑՔԵՐԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ

50 Բոլոր անցքերն ու ծակերը, անց ու դարձի, ծանրություններ փոխադրելու, հարկածածկի, կամարանցքի, լուսանցքի, սանդուխքների վանդակի, վերհան մեքենաների տեղերի և այլ ծակերը պիտի ծածկվեն խիտ տախտակամածով և կամ շինվեն բազրիքներ, առնվազն 1 մետրը բարձրությամբ, 18 սմ. լայնության կողատախտակով։

51. Այն դռներն ու այլ ոժանդակ անցքերը, որ տանում են դեպի դուրս կամ դեպի չծածկված տարածություն և որ գտնվում են բարձրերում ու բանվորների անց ու դարձի ճանապարհի վրա, պիտի համապատասխան ձևով ցանկապատված լինեն և կամ բոլորովին փակված խիտ տախտակափակով։

VII. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ

52. 1/4-ից ավելի, ինչպես և պակաս թեքություն ունեցող տանիքներում աշխատելիս, յեթե տանիքի մակերևույթը ծածկված է բառույցով, յեղյամով, կամ ընդհանրապես թաց է, բանվորը պարանով կապված պիտի լինի զոտկատեղից, իսկ պարանի մյուս ծայրը ամրացված պիտի լինի մի որևե վստահելի տեղ։ Պարանը լավ վորակի պիտի լինի և հաստության շրջագիծը պակաս չպիտի լինի 40 մմ։ (տրամագիծը 12 մմ.)։

53. Տանիքի յեղերքին աշխատելիս, ինչպես որինակ կարնիզներն ամրացնելիս կամ ներկելիս՝ բանվորի կապված լինելը պարտադիր է, յեթե նույնիսկ տանիքի թեքությունը շատ չնչին լինի։

54. Ապակեպատ տանիքների և լապտերների աշխատանքները կատարվում են այն պայմանով, որ աշխատանքի տեղը տախտակից կամ մի այլ

նյութից խիտ տախտակամած լինի շինված, որպեսզի ապակիները և այլ իրերը չթափվեն։

55. Ապակեպատ տանիքների ու լապտերների վերանորոգման աշխատանքները թույլատրվում են միմիայն ամուր և դիմացկուն յելարանների կամ տախտակամածի վրայից։

VIII. ՎԵՐՔԱՇՆԵՐԻ (ПОДЪЕМНИК) ՅԵՎ ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՈՒՄԸ

56. Շինարարական նյութեր փոխադրելու համար ոժանդակ կառուցվածքի մեջ վերքաշներ և այլ բարձրացնող մեքենաների կառուցումն ու ոգտագործումը պետք է համապատասխանի «բարձրացնող մեքենաների կառուցման, ստուգման և ոգտագործման կանոններին», որ հաստատված է Աշխժողկոմատի կողմից 1923 թվի հունիսի 24-ին և «բարձրացնող մեքենաների ու ոժանդակ հարմարությունների կառուցման, ստուգման և ոգտագործման կանոններին»՝ հաստատված Աշխժողկոմատի կողմից 1922 թ. մայիսի 11-ին։ (Տես «պարտադիր վորոշումների և կանոնների ժողովածուն՝ անվտանգության տեխնիկայի և արդյունաբերության սանիտարիայի մասին)։

57. Վերքաշներն ու բարձրացնող մեքենաները գործադրելուց առաջ պիտի վավերացվեն

Աշխատողկոմատի տեխնիկական հսկողության կողմից՝ նախորդ հոդվածում նախատեսված «Կանոնների» կարգով։

58. Շինարարական աշխատանքների չափերից ու տեղական պայմաններից բղխող հանգամանքների շնորհիվ «Բարձրացնող մեքենաների կանոններից» (հոդվ. 56) շեղումներ անել թույլ տալ կարող են Աշխատողկոմատի նահանգական մարմինները, կամ դրան համապատասխանող այլ մարմինները։

IX. ՇԵՆՔԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄԸ

59. Շինարարական աշխատանքների մեջ արհեստական լուսավորություն պիտի կիրառվի այն բոլոր դեպքերում, երբ աշխատանքները կատարվում են գիշերը, փակված տեղերում, ցերեկվա լույսի բացակայությամբ։

Բոլոր այն տեղերը՝ ուր աշխատանք է կատարվում, ինչպես և բոլոր մուտքերը, յելքերը և անցքերը պետք է լուսավորված լինեն բավարար չափով։

60. Բոլոր անցքերն, ու յելքերը պիտի ունենան պահեստի լապտերներ, իրենց մոմերով։

61. Շենքի չլուսավորված մասերը, Իսրահեղ աշխատանքներ չեն կատարվելու, պետք է փակ-

ված լինեն և բանվորների անց ու դարձն այդ տեղերում արգելված պիտի լինի։

62. Խոտիվ արգելվում է ոգատարձել նավթի ճրագներ և մոմեր, առանց ապակեպատ և ցանցապատ լապտերի մեջ տեղավորելու։

63. Յեթե աշխատանքի վայրը հատվում է դաշտատար խողովակներին, թույլատրվում է ելեքտրական կամ հանքային ապահովիչ լապտերների լուսավորություն։

64. Շենքերում ելեքտրական լուսավորություն անցկացնելու դեպքում պիտի պահպանված լինեն այդ մասին հրատարակված հատուկ կանոնները, վոր ընդունված են ելեքտրոտեխնիկական համառուսական VIII համագումարի կողմից և վորպես պարտադիր վորոշում՝ առաջարկված է գործադրել ԽՍՀՄ-ի Աշխատողկոմատի կողմից 1924 թվի սեպտ. 22-ին № 487. (ԽՍՀՄ—Աշխատողկոմ. տեղեկագիր 2924 թ. № 46)։ Բացի այդ պահպանված պիտի լինեն նաև հետևյալ կանոնները.

ա) Ինչպես դրսի, այնպես ել ներսի ելեքտրոլարերը պիտի անպատճառ չեզոքացրված լինեն։

Ծանոթություն։ — Չչեզոքացրած պղնձալարեր գործադրելու դեպքում նրանք

տեղավորված պիտի լինեն փայտյա փակված տուփերի մեջ։

բ) Ելեքտրալարը պիտի անցկացրված լինի չեղոքացուցիչներով և գլանիկներով (ролик)։

գ) Ելեքտրալարերը պատերի ու ծակերի միջով պիտի անցկացրված լինեն Բերգմանյան խողովակների միջոցով։

դ) Ելեքտրոլարը պիտի ունենա ապահովիչ և անջատիչ (выключатель), ըստ վորում՝ անջատիչը տեղավորված պիտի լինի կամ մուտքի մոտ և կամ բաշխիչ տախտակի վրա, աչքի ընկնող տեղում։

յե) Արտաքին լապտերները պիտի ունենան ծածկեր կամ լուսամփոփներ (մետաղյա) վորպեսզի վտանգվելուց ապահովված լինեն։

65. Յերբ աշխատանքները կատարվում են արհեստական լուսավորության տակ, լուսավորող պարագաների և նրանց մասեր բավարար պաշար պիտի լինի։

66. Արհեստական լուսավորության հսկողությունն ու սպասարկումը պիտի հանձնվի հատկապես այդ գործի համար նշանակված մարդու։

X. ՇԵՆՔԵՐԻ ՅԵՎ ՆՐԱ ՄԱՍԵՐԻ ՔԱՆԴԵԼԸ

67. Շենքերը քանդելու աշխատանքների անմիջական ղեկավարության համար պիտի նշանակվի մի պատասխանատու անձնավորություն, վորը պիտի ունենա շինարարական աշխատանքներ կատարելու իրավունք և նման աշխատանքների բավարար փորձառություն։

68. Նախքան շենքի քանդելու աշխատանքներին անցնելը, աշխատանքների համար պատասխանատու անձը պիտի մանրամասնորեն հետազոտի շենքը և այդ մասին կազմի արձանագրություն, վորի մեջ մատնանշված պիտի լինի թե՝ ա) վոր մասերն են յենթակա փլելու վտանգին և վորոնք են դրանցից ամենավտանգավորները, բ) հիշյալ մասերի կառուցվածքային կապը հարակից շենքերի հետ, գ) փլելու վտանգ սպառնալու հավանական պատճառները։

69. Մեկից ավելի հարկեր ունեցող, ինչպես և մեկ հարկանի հիմնական և բարդ կառուցվածքով շենքերը քանդելուց առաջ աշխատանքների պատասխանատու անձը, բացի նախորդ հոդվածում հիշված արձանագրությունից, պիտի կազմի նաև աշխատանքների ծրագիր, վորի մեջ պիտի ցույց տա.

ա) Ինչ միջոցներ պիտի ձեռք առնել, վորպեսզի շենքը քանդելու աշխատանքն սկսելուց առաջ, ինչպես և աշխատանքի ընթացքում, հանկարծակի փլումներ տեղի չունենան, ինչպիսի՞ ժամանակավոր ամրություններ, հենարաններ, սյուներ և այլն պիտի շինել։

բ) Ի՞նչ միջոցներով և նախատեսվում քանդել շենքը։

գ) Ի՞նչ թվով բանվորներ են անհրաժեշտ հաջողությամբ և անվտանգ քանդելու համար։

դ) Շենքի վո՞ր մասերից պիտի սկսել քանդելու աշխատանքները և հետագայում ինչպե՞ս պիտի շարունակել։

յե) Աշխատանքի անվտանգ դարձնելու միջոցները՝ ցանկապատ կառուցելով ինչպես քանդվելիք շենքի հարկավոր մասերում, այնպես և նրան հարակից տեղերը—փողոցի կողմը, անցքերում և այլն։

զ) Ինչ միջոցներ պիտի ձեռք առնվի շենքը քանդելու ժամանակ, վորպեսզի չփչացվեն և չերմերկացվեն ելեքտրոլարերը, տրանսֆորմատորները, կաբելները, ջրմուղը, կոյուղին և այլն։

70. Անհրաժեշտության դեպքում հետազոտման արձանագրությանն ու աշխատանքի ծրագրին պիտի կցվեն նրանց մանրամասն բացատրություններն ու համապատասխան հատակագծերը կամ եսքիզները։

71. Հետազոտության արձանագրությունը, աշխատանքների ծրագիրը և նրանց վերաբերող բացատրությունները, հատակագիծն ու եսքիզները ուղարկվում է Աշխժողկոմատի նահանգային կամ այլ համապատասխան մարմնին, աշխատանքներն սկսելուց ամենաքիչը յոթ որ առաջ։

72. Շենքը քանդելու աշխատանքներին անցնելուց առաջ աշխատանքների ղեկավարը՝ պատասխանատու անձը, պետք է բոլոր մասնակցողներին ծանոթացնի աշխատանքի ամենավտանգավոր տեղերի ու մոմենտների հետ, սակայն դա դեռ չի ազատում նրան այն պարտականությունից, վոր ամեն մի նախազգուշական միջոց ձեռք առնի դժբախտ պատահարները կանխելու համար։

73. Ներկայացրված ծրագրի մեջ ամեն տեսակի փոփոխություններ կամ շեղումներ կատարելու մասին աշխատանքների պատասխանատու անձը պիտի անմիջապես տեղեկացնի Աշխժողկոմատի նահանգային կամ այլ համապատասխան մարմնին։

74. Մինչև շենքի քանդելու աշխատանքներին անցնելն անհրաժեշտ է։

ա) Քանդելու յենթակա շենքի շուրջը՝ հարկավոր հեռավորության վրա կառուցել ժամանակավոր ցանկապատ, բարյերներ, ուղեկապեր (рогатка) և այլն, կամ թե այլ համապատասխան միջոցներով ապահովել ինչպես աշխատողներին, այնպես և անցորդներին՝ զանազան նյութեր, կոտորներ, գերաններ և այլն շենքից ցած ընկնելու վտանգից։

բ) Քանդելու յենթակա շենքի և նրա ցանկապատերի մուտքերի, անցքերի մոտ հայտարարություն փակցնել այն մասին, որ կողմնակի մարդկանց մուտքը խստիվ արգելվում է։

գ) Հեռացնել առաստաղները, պատշգամբները, միջանցքները, սյուները, սանդուխները և այլն ու փտած կամ կոտրած գերաններ, խարխուլ պատեր կամ այլ անկայուն մասեր յերևան հանելուն պես՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել նրանց փլման դեմ՝ հենարաններ, սյուներ և այլ ամրություններ հարմարեցնելով այդ տեղերին։

դ) Միջոցներ ձեռք առնել, որ անհրաժեշտ փայտեղենը, յելարանները, տախտակամածը և այլն բավարարեն իրենց ամրությամբ և դիմացկանությամբ։

75. Տանիքների և շենքի այլ վերին մասերի քանդելը, ինչպես որինակ՝ բրանդմաուերների,

պարապետների, ծխնելույզների, գերանների, բարձրությունների և այլ մասերի քանդելը պիտի կատարվի վորոշ հետևողականությամբ—վերից վար իջնելով և այնպես, վոր մի մասի քանդելը պատճառ չդառնա մյուս մասերի փլելուն։ Այս պահանջը տարածվում է նաև աշխատանքների հետագա ընթացքի վրա։

76. Կտուրը քանդելու ժամանակ պիտի պահպանվեն տանիքների աշխատանքների համար նախատեսված նախազգուշողական կանոնները (սույն «կանոններ»-ի VII մասը) մանավորապես բանվորը՝ պիտի կապված լինի, յերբ նա աշխատանք և կտտարում ձեղունակալի (стропиля), ծխնելույզի յեզրապատերի (պարապետների) վրա, ըստ վորում, նա լիովին վստահ պիտի լինի, վոր կապերը պինդ և ապահով են։

78. Յերկաթե թիթեղները, տանիքի փայտե մասերը և ընդհանրապես բարձրում տեղավորված ծանր և խոշոր նյութերը պիտի պոկել զգուշությամբ և իջեցնել պարաններով կախելով, կամ ցած գցել միմիայն ցանկապատած տարածության վրա։ Նույն կանոնը վերաբերում է նաև քարի, ապյուսի, կղմինդրի, գերանների և այլների ցած թափելուն, վորի համար, անկախ հիշված նախազգուշողական միջոցներից, անհրաժեշտ է ողտա-

գործել պարաններ, նովակներ (նովդան) (желоба), ըստ վորում՝ ցածը պիտի հակիչ կանգնած լինի, կատարվող աշխատանքներից առաջացող վտանգը կանխելու համար։

78. Միջ-հարկային կրկնածածկերը, վորտեղ աշխատանքներ են կատարվում, չփակված անցքեր չպիտի ունենան, իսկ ստորին շենքերի յելուզմուտքը միանգամայն պիտի դադարեցվի։

79. Առաստաղը քանդելու ժամանակ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել ծեփը թափվելուց առաջացող դժբաղդ պատահարների դեմ։

80. Արգելվում է ծխնելույզը կամ քարե սյուները քանդել և թափել առաստաղի վրա, ինչպես և ընդհանրապես քանդած նյութը թափել կամ դարսել առաստաղի, ոջորքի (накат) վրա։

Քանդվելուց ստացված ամբողջ նյութը անհրաժեշտ է անընդհատ իջեցնել ցած և չթույլատրել, վոր աշխատանքների ընդհատումների ժամանակ նրանք ճնան իրենց տեղում։

81. Արմատական թաղերը քանդելու ժամանակ պիտի պահպանվեն հետևյալ կանոնները,

ա) Տաշտաձև, փակ թաղերը և կամարները քանդելու ժամանակ, ինչպես և այն կամարները կամ նրանց հիմքերը քանդելիս, վորոնց կայունությունը կասկած է առաջացնում, նրանց տակը

պիտի համապատասխան ամրությամբ կամարակապ (кружал) շինել։

բ) Ուղիղ գծով կազմած թաղերի (գլանաձև, խաչաձև և այլն) քանդելը թույլատրվում է նաև առանց կամարակապի, (կրուժալ) միայն այն պայմանով, վոր աշխատանք սկսվի կողպեքից դեպի կրունկները, (ներբան) վորոշ կտորներով՝ աղյուսի կամար քանդելիս վոչ ավելի մեկ աղյուսաշարից, իսկ բետոնային կամար քանդելիս՝ վոչ ավելի մեկ մետրից, ըստ վորում բանվորը կանգնած պիտի լինի կամարի դեռևս ձեռք չված մասի վրա։

գ) Կորագիծ կամարների և թաղերի (գմբեթաձև և այլն) քանդելը պիտի սկսվի կողպեքից, կամարի կառուցվածքին համապատասխանող աստիճանականությամբ։

82. Սանդուխքների քարերը պիտի քանդվեն վոչ թե միանգամից, այլ աստիճանաբար, սանդուխքների քանդելուն զուգընթաց։

83. Փայտանյութերի քանդելը պիտի հանձնարարել միմիայն փորձված բանվորներին։

Միլերը, գերանները և սյուները վերցնելիս հատուկ զգուշությամբ պիտի վարվել։ Անհրաժեշտ դեպքում, ինչպես որինակ սյուներից կամ ցցերից յերկաթակապեր կամ այլ կապեր հանել-

լիս՝ բանվորը պիտի կապված լինի, կամ պիտի ուղտագործի ժանիքավոր վոտնկապեր, յեթե հընարավոր և անվտանգ կերպով ոգտագործել այն։

84. Քանդելուց հետո ստացված նյութերը այնպես պիտի դասավորվեն, վոր չթափվեն, չըփլեն և դրանով վորևե մեկին վնաս չըհասցնեն։

Նյութերը դասավորելիս անցքերում թափված չպիտի լինեն ջարդած ապակու կտորներ, հին թիթեղի կտորներ, ինչպես և մեխերով ու յերկաթակապերով տախտակներ։ Գիշերները, յեթե անցքերը փակված չեն լինում, պիտի լուսավորված լինեն։

85. Շենքը քանդելուց հետո առաջացած փոսերը, մինչև հողով լցնելը պիտի վստահելի կերպով ցանկապատած լինեն։

86. Այն դեպքերում, յերբ քարե շենքերի կամ առանձին պատերի, ծխնելույզների և այլնի աստիճանաբար վերից վար քանդելը վտանգավոր և կամ տեխնիկապես դժվար իրագործելի, թույլատրվում է շենքի կամ պատի հիմքը ծակել, անցք բաց անել հատուկ ծակող հարմարություններով և ապա շուռ տալ (փլեցնել)։

87. Շենքը փլեցնելուց առաջ անհրաժեշտ է

կատարել հետևյալ նախապատրաստական աշխատանքները։

ա) Յեթե փլեցնելու տեղը փակ է, հոգ տանել ազատ ու ապահով դուրս գալու տեղեր շինելու մասին։

բ) Քանդել թաղերը, վառարանները և շենքի ներսում գտնվող խոշոր զանգվածները, վորոնք իրենց մեջ զգալի թվով խոռոչներ են պարունակում, ինչպես և ընկնելու վտանգի մեջ յեղած մասերը (կոտրված կամարները, կարնիզները) և այլն, վորի համար պիտի շինել համապատասխան տախտակամած։

գ) Հեռացնել գերաններն ու աստիճանները՝ նախորոք մաքրելով քարային և աղյուսի փըշրանքից։

88. Պատերի կամ շենքերի հիմքում անցքեր բաց անելը պիտի կատարվի աստիճանաբար, մասմաս, բացած անցքերը փակելով միանման չոր և նավթ ծծած գերաններով, միևնույն չափի ու միևնույն փայտից։ Անցքերը վերջնականապես բանալուց հետո նրանց մեջ դրված գերանները վառվում են միաժամանակ։

Հիշյալ ձևով փլեցրած շենքերի զանազան մասերում նախորոք շինվում են խարիսխ (анке-

pa), որոնց ամրացվում են պինդ պարաններ (трос), քանդելու այն մասերը, որոնք գերաններ վառելուց հետո էլ կանգուն են մնացել։

89. Փլեցնելու ժամանակ աշխատանքների մեջ խիստ հետևողականություն պետք է պահվի։ Փլեցումը պիտի կատարվի պատասխանատու ղեկավարի անմիջական հսկողության տակ։

90. Եթե անհրաժեշտ է փլեցնել շենքի մասերը, կամ հենց շենքերը միաժամանակ յերկու կամ միքանի տեղում, վերջիններիս միջև յեղած տարածությունը պիտի լինի՝ ամուր հողի դեպքում վոչ պակաս քան բարձրության վեցապատիկը, իսկ միջակ ու թույլ հողի դեպքում՝ վոչ պակաս շենքի կամ նրա ամենաբարձր մասի բարձրության ութնապատիկից։

XI ՆԵՐԿԱ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ

91. Սույն կանոնները գործադրության մեջ են մտնում միութենական հանրապետությունների սահմաններում՝ համապատասխան աշխատանքի կոմիսարիատների կարգադրությամբ։

92. Սույն կանոնները պիտի փակցվեն, կախվեն շինարարական աշխատանքներ կա-

տարվող վայրերում, որպեսզի բանվորները կարողանան ծանոթանալ կանոններին։

93. Սույն «Կանոնների» խախտման հանցագործները աշխատանքի տեսչության միջոցով պատասխանատվության են յենթարկում միութենական հանրապետությունների քրեական որենսգրքի համապատասխան հոդվածներով։

94. Սույն «կանոնները» գործադրության մեջ դնելու հետ միասին (հոդված 91) վերանում են ՌՍՖՍՀ Աշխժողկոմի հետևյալ վորոշումները, որոնք համաձայն Աշխժողկոմատի ԺՏԳԽ-ի 14/XI 23 թ. վորոշման ուժի մեջ եյին մտել ամբողջ ԽՍՀՄ-ի սահմաններում (Աշխժողկ. տեղեկագիր 23 թվի № 11135)։

ա) ՌՍՖՍՀ Աշխժողկոմատի 1920 թվի մայիսի 5-ի պարտադիր վորոշումը շինարարական աշխատանքներն անվտանգ դարձնելու միջոցների մասին «պարտադիր վորոշումների ու կանոնների ժողովածու շին. աշխ. անվտանգ և առողջ տեխնիկայի մասին» պրակ 1։

բ. ՌՍՖՍՀ Աշխսոցապժողկոմատի 1920 թվի 23/II-րդ հաստատած կանոնները փայտի շենքեր քանդելու աշխատանքներն անվտանգ դարձնելու

միջոցների մասին «պարտադիր վորոշումների ու կանոնների ժողովածու անվտանգ. տեխնիկայի և արդյունաբ. առողջ. մասին» պրակ 1-ին։

ԽՍՀՄ-ի աշխժողկոմ. ՇՄԻՏԴ

Աշխժողկոմի աշխպաշտպան. բաժնի վարիչի տեղակալ ԶԱՐՈՄԱԿԻ

Անվտանգութ. տեխնիկա յի ը վարիչ ԿՈՒԴՐՅԱՎՑԵՎ

Ճիշտ է
իտ. կառուցողների կենտկոմի գործերի վարիչի ՄԱԶՈՒՐԻՆԱ

Գրառեղվաբ 231բ տիրաժ 2500 պատ. 73

Տպարան ՀԵՐՄԵՍ հրատ: Ցերևան, Մարքսի փողոց № 29.

ՀՀ Ազգային գրադարան
NL0943266